ՏԻԳՐԱՆ ՊԱՐՍԻԼՅԱՆ

Կրթահամալիրի կաբինետների ղեկավարների սեմինար

Շաբաթ օրեր, ժամը 11:00 – 12:00

Սեմինարի ծրագիր (մեկժամանոց վեց սեմինար)

-Թվային սարքավորումները ուսուցման մեջ: Դրանց հիմնական բնութագրիչները: Անվտանգ շահագործման առաջնային կանոնները:

-Անհատական համակարգիչ: Կառուցվածքը, միացման պորտերը, պերիֆերային սարքավորումները, անվտանգ շահագործումը:

-Օպերացիոն համակարգեր: Դրանց դերն ու նշանակությունը, հիմնական ընտանիքները: Դրանց առավելություններն ու թերությունները:

-Windows օպերացիոն համակարգեր: Սերունդները: Հիմնական կառուցվածքը: Տեղադրումը:

-Windows օ.պ.-ի հիմնական կարգավորումներ:

-Համակարգչի աշխատանքի բարելավում, օպերացիոն համակարգի անընդհատ խնամք: Հակավիրուսային ծրագրեր և այլ պաշտպանական և այլ կարգավորիչ ուտիլիտներ:

Սեմինարի արդյունքում կաբինետի ղեկավարը պետք է

- Ծանոթ լինի սարքերի անվտանգ շահագործման կանոններին և հնարավորություններին:
- Ծանոթ լինի մուլտիմեդիային և համակարգչային այլ ֆայլերի հիմնական ֆորմատներին, դրանց տարբերություններին:
- Ակտիվություն ունենա համացանցում (սոց. ցանցեր, բլոգավարություն, էլեկտրոնային փոստ, մասնագիտական ֆորումներ, mskh.am), մասնավորապես Էլ. Գրատախտակ օգտագործող ուսուցիչը պետք է գրանցված լինի Smart forum օֆիցիալ ֆորումում:
- Ծանոթ լինի օպերացիոն համակարգի անվտանգ շահագործման և ծրագրային ապահովման մինիմալ հմտություններին:

Հանրակրթական դասընթացի ընթացքում ՏՀՏ-ն շահագործելիս անհրաժեշտ է ապահովել

- Օպերացիոն համակարգի աշխատունակությունն
- Երեխայի ինֆորմացիոն անվտանգությունը:
- Առողջական և էրգոնոմետրիկ անվտանգությունը

Դասընթացների արդյունքում ստացված արտադրանքները պետք է լինեն ավարտուն և ամբողջական և բավարարեն ստորև բերված պահանջներին:

- Նյութեր ստեղծելիս հնարավորինս օգտագործել հեղինակային նյութեր:
- Նյութեր ստեղծելիս հնարավորինս ինտեգրվեն թվային միջոցներ և գիտելիքներ այլ առարկաներից:

- Նյութում պետք է նշվեն աշխատանքային գործընթացին այս կամ այն կերպով մասնակցած անձանց անունները և mskh.am կայքը, կամ դրա հղումը,նյութի ստեղծման տարեթիվը: